ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

06 դեկտեմբերի 2019 թ. № 24 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ) ԿԱԶՄՈՒՄ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ, ՊԱՐԱԼԻՄՊԻԿ, ՍՈՒՐԴԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 2 աղյուսակի 1041 ծրագրի «Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության վարչապետի անվանական թոշակի հատկացում» միջոցառումը՝ հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի (ներառյալ՝ հաշմանդամային սպորտը) կազմում օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության վարչապետի անվանական թոշակ (այսուհետ՝ անվանական թոշակ) հատկացնելու կարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի (ներառյալ՝ հաշմանդամային սպորտը) մարզիկներին, նրանց անձնական մարզիչներին անվանական թոշակ նշանակելու չափորոշիչներն ու չափերը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի (ներառյալ՝ հաշմանդամային սպորտը) գլխավոր մարզիչներին, ավագ մարզիչներին և մարզիչներին անվանական թոշակ նշանակելու չափորոշիչներն ու չափերը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Սույն հրամանը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ.ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի
2019 թվականի հունվարի 6-ի
№ 24-Ա հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ) ԿԱԶՄՈՒՄ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ, ՊԱՐԱԼԻՄՊԻԿ, ՍՈՒՐԴԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ մարզաձևերի և շախմատի հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության վարչապետի անվանական թոշակ (այսուհետ՝ անվանական թոշակ) հատկացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Անվանական թոշակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության այն մարզիկներին, ինչպես նաև նրանց անձնական և հավաքական թիմերի մարզիչներին, ովքեր օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ մարզաձևերի և շախմատի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմում օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և շախմատային օլիմպիադաներում հասել են բարձր արդյունքների:

3. Անվանական թոշակ է նշանակվում Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով, սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերով սահմանված ժամկետներում:

4. Անվանական թոշակի հատկացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Անվանական թոշակի հատկացումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի և սույն հրամանի համաձայն:

6. Անվանական թոշակի թեկնածուների հաշվառման, փաստաթղթերի հավաքման և անվանական թոշակի թեկնածուների հետագա առաջադրման, անվանական թոշակ ստացողների թոշակի կասեցման կամ զրկման նպատակով նախարարի կողմից ստեղծվում է հանձնաժողով, որի ինն անդամներից բաղկացած անհատական կազմը և գործունեության կարգը հաստատում է նախարարը:

7. Հանձնաժողովի կազմը ձևավորվում է նախարարության, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե», «Հայաստանի շախմատային ֆեդերացիա», «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» և «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

8. Անվանական թոշակի թեկնածուների ցանկը, անվանական թոշակ ստացողների թոշակի կասեցման կամ զրկման վերաբերյալ առաջարկությունները հանձնաժողովը ներկայացնում է նախարարին:

9. Անվանական թոշակի թեկնածուների վերաբերյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել նախարարություն մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 5-ը՝ օլիմպիական մարզաձևերի ֆեդերացիաների, «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության, «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» և «Հայաստանի շախմատային ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունների կողմից՝ բացառությամբ սույն կարգի 11-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկներին և նրանց անձնական մարզիչներին, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետի պահանջների, անվանական թոշակ է նշանակվում նախորդ տարվա մարզական արդյունքների հիման վրա՝ մեկ տարի ժամկետով՝ համաձայն սույն հրամանի 2-րդ հավելվածի:

11. Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերի մասնակցության վարկանիշ ձեռք բերած մարզիկին և նրա անձնական մարզչին վարկանիշի ձեռքբերման պաշտոնական արձանագրության հիման վրա նշանակվում է անվանական թոշակ՝ մարզիկի արդյունքի ձեռքբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից մինչև օլիմպիական խաղերի ավարտին հաջորդող ամսվա 1-ը:

12. Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի գլխավոր մարզիչներին, ավագ մարզիչներին և մարզիչներին անվանական թոշակ նշանակվում է համապատասխան հավաքական թիմերի մարզիկների նախորդ երկու տարվա ընթացքում արդյունքների ձեռքբերման համար՝ համաձայն սույն հրամանի № 3 հավելվածի: Ընդ որում, գլխավոր մարզիչների, ավագ մարզիչների և մարզիչների փոփոխության դեպքում անվանական թոշակի վճարումը դադարեցվում, իսկ նոր նշանակված մարզչի վճարումը իրականացվում է մարզիչների փոփոխությանը հաջորդող ամսվա 1-ից:

13. Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիչների համար սահմանված անվանական թոշակին գումարվում է անձնական մարզչի համար նախատեսված թոշակի 75 տոկոսի չափով հավելում՝ նրա պատրաստած յուրաքանչյուր մարզիկի համար:

14. Սույն հրամանի 2-րդ հավելվածով անձնական մարզչի համար նախատեսված անվանական թոշակը նշանակվում է մարզիկի հետ մեկ տարուց ոչ պակաս

անմիջական աշխատանքի համար՝ հաշվի առնելով այդ մարզիկի ցուցաբերած մեկ լավագույն արդյունքը:

15. Անձնական մարզչի համար նախատեսված անվանական թոշակին լրացուցիչ ավելանում է նրա պատրաստած յուրաքանչյուր այլ մարզիկի ցուցաբերած արդյունքի համար՝ անձնական մարզչի թոշակի 75 տոկոսի չափով հավելում:

16. Ծանրամարտում անվանական թոշակ է նշանակվում միայն երկամարտում ցուցաբերած արդյունքների համար:

17. Նախարարը օլիմպիական մարզաձևերի ֆեդերացիաների, «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպության, «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» և «Հայաստանի շախմատային ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունների ներկայացմամբ, հանձնաժողովի առաջարկությամբ կարող է երկու ամիս ժամկետով կասեցնել մարզիկին և նրա մարզիչներին անվանական թոշակի հատկացումը աշխատանքային կարգապահության կամ մարզական ռեժիմի խախտման համար: Ժամկետը լրանալուց հետո թոշակի վերականգնման կամ ևս երկու ամսով կասեցնելու վերաբերյալ որոշումը կկայացվի հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը կարող է նաև մարզիկին և նրա մարզիչներին զրկել նշանակված թոշակից՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմից հեռացման փաստի հիման վրա:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի
2019 թվականի փետրվարի 6 -ի
№ 24-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ) ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ

	Մրցման անվանումը	Գրված տեղը	Անվանական թոշակի ամսավճարի չափը (դրամ)	
			մարզիկ	անձնական մարզիչ
1	2	3	4	5
1.	Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղեր	1-ին	500.000	250.000
		2-րդ	350.000	175.000
		3-րդ	300.000	150.000
		4-6-րդ	100.000	50.000
		վարկանիշի ձեռքբերման համար	90.000	45.000
	Համաշխարհային շախմատային օլիմպիադա, թիմային առաջնություն	1-ին	400.000	200.000
		2-րդ	250.000	125.000
		3-րդ	150.000	75.000
2.	Աշխարհի առաջնություն	1-ին	300.000	150.000
		2-րդ	200.000	100.000
		3-րդ	150.000	75.000
3.	Եվրոպայի առաջնություն, եվրոպական խաղեր	1-ին	150.000	75.000
		2-րդ	120.000	60.000

		3-րդ	100.000	50.000
4.	Պատանեկան օլիմպիական խաղեր, երիտասարդների աշխարհի առաջնություն, համաշխարհային ուսանողական մարզական խաղեր	1-ին 2-րդ 3-րդ	120.000 90.000 70.000	60.000 45.000 35.000
5.	Երիտասարդների Եվրոպայի առաջնություն	1-ին 2-րդ 3-րդ	100.000 80.000 60.000	50.000 40.000 30.000
6.	Ավագ տարիքի պատանիների աշխարհի առաջնություն	1-ին 2-րդ 3-րդ	80.000 70.000 60.000	40.000 35.000 30.000
7.	Ավագ տարիքի պատանիների Եվրոպայի առաջնություն, Եվրոպայի երիտասարդության ձմեռային կամ ամառային օլիմպիական փառատոն	1-ին 2-րդ 3-րդ	60.000 50.000 40.000	30.000 25.000 20.000
8.	Աշխարհի և Եվրոպայի մեծահասակների առաջնություններ (բացառությամբ ազատ ոճի և հունա-հռոմեական ըմբշամարտ, ձյուդո, բոնցքամարտ, թաեքվոնդո, ծանրամարտ, շախմատ մարզաձևերի)	4-24-րդ	60.000	30.000
9.	Աշխարհի և Եվրոպայի հաշմանդամային սպորտի շրջանակներում մեծահասակների առաջնություններ	4-24-րդ	60.000	30.000

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 3
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2019 թվականի ---------- *-ի*
№ ---------- *հրամանի*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ) ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ, ԱՎԱԳ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԵՐԸ

№	Մրցման անվանումը	Գրված տեղը	Անվանական թոշակի ամսավճարի չափը (դրամ)			
			ՀՀ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ	ՀՀ ազգային հավաքականի մարզիչ	ՀՀ երիտասարդական հավաքական թիմի ավագ մարզիչ	ՀՀ պատանեկան հավաքական թիմի ավագ մարզիչ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1.	Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղեր	1-ինից 3-րդ տեղերի, վարկանիշի ձեռքբերման համար	200.000	140.000		
	Համաշխարհային շախմատային օլիմպիադա (թիմային հաշվարկ), աշխարհի և	1-ինից 3-րդ տեղեր				

	Եվրոպայի առաջնություններ, եվրոպական խաղեր, համաշխարհային ուսանողական մարզական խաղեր					
22.	Երիտասարդների աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, Եվրոպայի երիտասարդության ձմեռային կամ ամառային օլիմպիական փառատոն	1-ինից 3-րդ տեղեր			120.000	
33.	Ավագ տարիքի պատանիների աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, պատանեկան օլիմպիական խաղեր	1-ինից 3-րդ տեղեր				90.000

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ